

ԿՐՈՆԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶՄՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝

ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՀՎՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՅԻՆ

(3 ապրիլի, շաբաթ, 1999 թ.)

*«Այսօր յարեալ ի մեռելոց, Փեսայն անմահ
եւ երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան հարսն ի
յերկրէ եկեղեցի, օրհնեալ ի ծայն ցնծութեան,
զԱստուած քո Աիոն»:*

(Շարական)

«Յանուն Գօր եւ Որդւոյ եւ Գօղոյն Արքոյ. ամեն»:

Այսօր, սիրելի, հավատացյալներ, շարականագրի խոսքերի համաձայն, ավետվում է մեզ, որ մեր Տերը՝ Գիտուս Քրիստոս, մեռելներից հարություն առավ: Եվ շարականագիրը շարունակելով ասում է, թե՛ «Յնծացեք, ով ժողովուրդ, եկեղեցի, որովհետև Փեսան անմահ և երկնավոր հարություն առավ, դուք, իբրև ժողովուրդ, հարսն եք երկրից երկինք փոխադրվող»:

Ապաշխարության շրջանը, ահավասիկ, իր ավարտին հասավ: Անցյալ կիրակի Ծաղկազարդի տոնն էր: Մեր Տերը՝ Գիտուս Քրիստոս, թագավորական հանդիսավորությամբ և փառավորապես մուտք գործեց Երուսաղեմ: Ծերերը և երիտասարդները, երեխաները և պատանհները, ձիթենու և արմավենու ոստերը ձեռքներին, դիմավորեցին իրենց փառավորյալ Տիրոջը, որ գալիս էր Աստծու անունով: Իսկ Ավագ շաբաթվա ընթացքում մենք հետևեցինք մեր Տիրոջ ոտնաքայլերին, որոնք գալով Բեթանիայից, ուղղվեցին Երուսաղեմ՝ դեպի Տաճար, և քաղաքի Չիթենյաց լեռան լանջին մեր Տերը տազնապալի պահ ապրեց ենթարկվելով փորձության: Որպես հողեղեն շինվածք, աստվածայինն իր մեջ փառավորվեց իր գոհողությամբ, իր պատրաստակամությամբ: Եվ Տերն ասաց. «Անցո գբաժակս գայս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս» (Մարկոս ԺԴ 36): Մարմինը հողեղեն էր, հոգին՝ աստվածային: Եվ իսկապես, երբ մեր Տերը դատապարտվեց, ծաղկվեց և Պիղատոսի առջև տարվեց, քահանայապետերի որոշումով նրան մահվան դատապարտեցին և Գողգոթայի բարձունքում խաչեցին: Բայց Իր մահվանից երեք օր հետո, միաշաբաթվա, կիրակի օրվա արևը դեռ չծագած, երբ Մարիամ

Մագդաղենացին մյուս կամանց հետ գնում էր գերեզման՝ խնկով և գմուռսով Քրիստոսի մարմինը օժանելու և պատելու, հանկարծ տեսնում է, որ այն քարը, որով փակված էր գերեզմանի դուռը, տեղաշարժված է, և գերեզմանի քարի վրա նստած է հրեշտակը, ով ասում է. «Ձի՛ խնդրեք գկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեալ» (Ղուկաս ԻԴ 5-6): Բնության ինչպիսի՛ հրաշք է սա, որ մեր Տերը՝ Դիսուս Քրիստոս, կարողացավ Իր մահվամբ մահին հաղթել և Իր հարությանբ կյանք պարգևել մեզ բոլորիս:

Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղած իր առաջին նամակում իրավամբ ասում է, որ եթե Դիսուս Քրիստոս հարություն առած չլիներ, ձեր հավատքը և մեր քարոզչությունը ընդունայն կլիներ (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 14): Եվ իսկապես, մեր Տերը դարերի ընթացքում ամեն Ձատկի ճրագալույցի երեկոյան խորհրդապես հարություն է առնում մեռելներից, որպեսզի ուսուցանի մեզ, որ մահվանից չվախենանք: Մահը վերջ չէ մարդու համար, այլ հավիտենական մի նոր կյանքի սկիզբ: Եվ նրանք, ովքեր ապաշխարությամբ, աղոթքով, բարեգործությամբ, զոհողությամբ, խոնարհությամբ, հեզությամբ կկարողանան իրենց համար գանձեր դիզել երկնքում, նրանց համար է առաջին հերթին հավիտենականության ու հարության պատգամը: Նրանք կարող են մեռնել մարմնով, բայց անմահ են հոգով: Եվ նրանց հոգիները մահվանից հետո գնալու միանալու են հարուցյալ Դիսուս Քրիստոսին և Նրա հետ վայելելու արքայության բոլոր բարիքներն ու պարգևները:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ Ձատիկը եկավ, բնությունը զարթնեց, արեգակն իր պայծառ ճառագայթներով ցերմացնում է աշխարհը: Ծիլերը և ծաղիկները, ծառերը և հունդերն իրենց աչուկներն են բացում, գեղեցիկ ժպտում են մեզ և ամենուր գարունն են ավետում: Այս ամենը վկայում է, որ մեր կյանքում սկսել է հարության, վերագարթոնքի և կյանքի տոնը: Այս երջանիկ առիթով քրիստոնյաներս պետք է Քրիստոսի Գարության հույսով և հավատով զորացած նայենք մեր ապագային, պայծառատեսությամբ լեցուն, և մեր ապագան կարողանանք կերտել այսօրվանից՝ մեր արդար քրտինքով, մեր հավատով և մեր հայրենիքի վերաշինության, մեր ժողովրդի բարօրության համար ամեն տեսակի զոհողություն հանձն առնենք և ոչ թե անհույս և անհավատ մարդկանց նման հազիվ ճանապարհածախս ձեռք բերելուն պես, թողնենք և փախչենք մեր հայրենիքից:

Մենք պետք է դառնանք այս երկրի իսկական տերը: Եվ նրանք, ովքեր չեն ուղղվում, ճշմարտությանը չեն ծառայում, նրանք, ովքեր խարդախ միջոցներով հարստություն են դիզում, որպես քրիստոնյաներ նրանց դեմ ծառանանք և ցույց տանք ճշմարտության պատգամը: Ժամանակն է գիտակցելու, որ անցնող 70 տարիները չեն եղել փրկության տարիներ, այլ հոգևոր իմաստով ուժանալու տարիներ, և ժամանակն է արթնանալու, զգաստանալու և եկեղեցու մեզ տված պատգամները սիրով ընդունելու և դրանց հետևելու: Միայն այս ձևով է հնարավոր ժողովրդի մեջ վերստին հարության շունչն արթնացնել, ինչպես այս պահին ամենքիս հոգու մեջ հարության շունչը կենդանություն է առել և մեր հոգիներին տալիս է ուժ, հավատք և զորություն: Միասնական ջանքերով քայլ առ քայլ դիմենք դեպի աստվածային բարությունը՝ այն դարձնելով մեր առօրյան և կյանքի նպատակը:

Այս պահին, սիրելի հավատացյալներ, երբ հավաքվել ենք Մայր Տաճարի սուրբ կամարների տակ, բոլորիդ տալիս եմ Քրիստոսի Սուրբ Հարության պատգամը. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ գնահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»: Այս երջանիկ առթիվ «Տէր ողորմեայ»-ի պահին միասին աղոթենք մեր բոլոր հիվանդների համար և հատկապես աղոթենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Ա Հայրապետի առողջության համար: Թող Աստված Իր Որդու հարությամբ այս պահին այցելի բոլոր հիվանդներին, ծերունիներին, որոնք անօգնական են, երեխաներին, ումքեր որբ ու թափառական կյանք են վարում: Թող Աստված բոլորին օգնության հասնի Իր Որդու հարության պահին և բոլորին հարության շունչը պարգևի, որ անմահությունն ինքն իսկ է:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ձեզ եւ մեզ մեծ աւետիս, ամեն»: